

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արագած Սաղաթելյանի շնորհավորական ուղերձը

Մեպտեմբերի 1-ի կապակցությամբ

31.08.2018



Միրելի դպրոցականներ, ուսանողներ, մանկավարժներ, ծնողներ, կրթության բնագավառի ներկայացուցիչներ,

Ջերմորեն շնորհավորում եմ նոր ուսումնական տարվա՝ Գիտելիքի և դպրության օրվա կապակցությամբ:

Դպրոցը յուրաքանչյուր մարդու մոտ արթնացնում է ամենաբարի ու ամենապայծառ հիշողությունները: Դպրոցում ձեռք բերված գիտելիքներն ամենահիմնավորն ու ամենամնայունն են: Իսկ գիտելիքը մարդուն դարձնում է ավելի ուժեղ, իմաստուն և ավելի բարի: Չկա ավելի հրաշալի բան, քան սովորելը, կարդալը ու նոր հորիզոններ բացահայտելը: Այսօր ես իմ երախտիքի խոսքն եմ հղում մեր ուսուցիչներին: Դուք ձեր սաներին ուղեկցում եք դեպի գիտելիք և կրթություն ստանալու դժվարին, բայց անասելի հետաքրքիր աշխարհը: Ձեզ է վստահված մեր սերունդների հայեցի դաստիարակության հայրենանվեր ու դժվարին գործը: Դուք ձեր սաների մեջ տեսնում եք մեր ազգի ապագա հանճարներին, օգնում եք նրանց բացել գիտության գաղտնի դռները՝ սերմանելով սեր ու նվիրվածություն հայրենիքի նկատմամբ ու դաստիարակելով Հայաստանի Հանրապետության արժանի քաղաքացիների: Միրելի մանկավարժներ, մաղթում եմ ձեզ հաջողություններ, ձեր պատասխանատու, շնորհակալ և պատվաբեր աշխատանքում:

Մեծ սիրով և ջերմությամբ ցանկանում եմ շնորհավորել առաջին անգամ դպրոց ոտք դրած մեր փոքրիկներին: Ցանկանում եմ, որ ուսումնառության տարիները ձեզ համար լինեն ամենահիշարժանը, որպեսզի դպրոցական տարիները լինեն վառ ու պայծառ ապրումներով հարուստ:

Միրելի աշակերտներ, հարգելի մանկավարժներ,

Կրկին շնորհավորում եմ Գիտելիքի և դպրության տոնի կապակցությամբ: Ցանկանում եմ բեղմնավոր և արդյունավետ ուսումնական տարի, նոր ու հետաքրքիր բացահայտումներ ու գերազանց գնահատականներ:

Բարի երբ: